ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁ ՎԵՐՋԻՆ ԴԱՍԻ ԱՌԹԻՎ

Սիրելի շրջանավարտներ.

Ընդունեք իմ ջերմագին շնորհավորանքն այս գեղեցիկ և բոլորիդ համար հիշարժան օրվա՝ <<Վերջին դաս>>-ի առթիվ: Տոնական այս գեղեցիկ օրն անշուշտ լի է հուզումնառատ պահերով:

Այսօր դուք հրաժեշտ եք տալիս Ձեզ հարազատ դարձած դպրոցին, Ձեր հարգարժան ուսուցիչներին և աշակերտական սիրո ամուր կապերով միահյուսված ընկերներին:

Տարին հատկանշական է և պարտավորեցնող, քանզի առավել կարևորվում է ազգային արժանապատվության գիտակցումը:

Լինելով գիտելիքահեն հասարակության զարգացման և առաջընթացի մերօրյա մարտիկներ, Ցեղասպանության հարյուրամյա տարելիցին դուք թևակոխում եք կյանքի մի նոր փուլ, նոր աշխարհ՝ որտեղ և միաժամանակ մեծ պատասխանատվություն և առաքելություն եք կրելու Ձեր ուսերին:

Բարձր պահեք ինչպես Ձեր հարազատ կրթօջախի, այնպես էլ հայրենիքի պատիվը:

Մեկ անգամ ևս շնորհավորելով Ձեզ , Ձեր ծնողներին և ուսուցիչներին այս պայծառ ու լուսավոր օրվա առթիվ՝ մաղթում եմ ամենայն բարիք, քաջառողջություն, հաջողություն խելամիտ նախաձեռնություններում և թող որ Ձեր բոլոր նվիրական իղձերն իրականան:

Ամենաջերմ բարեմաղթանքներով՝

Շիրակի մարզպետ՝
Ֆ.Ցոլակյան